ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «28» սեպտեմբերի 2021 թ.

ՀՐԱՄԱՆ № 07-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 28-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N 20-Լ հրամանով հաստատված հավելվածի 18-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 23-ի N 02/11./32847-2021 գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 26-ի «Գիտության կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2009 թվականի հունվարի 16-ի N 05-Լ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 28-Ա/Ք հրամանով հաստատված հավելվածը լրացնել նոր VI գլխով՝

«VI. ԿՈՄԻՏԵԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

41. Գլխավոր քարտուղարն իր իրավասության սահմաններում ապահովում է՝

1) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը՝ Կոմիտեում վարչական,

քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քաղաքացիական աշխատանք կատարող, տեխնիկական սպասարկում իրականացնող և աշխատանքային պայմանագրերով աշխատողների աշխատանքի ներկայանալիս.

2) սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը:

42. Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝

1) համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձի վերաբերյալ տվյալները մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացնում են տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

43. Կոմիտեում վարչական, քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քաղաքացիական աշխատանք կատարող, տեխնիկական սպասարկում իրականացնող և աշխատանքային պայմանագրերով աշխատողների պարտականությունն է՝

1) աշխատանքի ներկայանալիս Գլխավոր քարտուղարին ներկայացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:

44. Աշխատողների կողմից մինչև 43-րդ կետում նախատեսված պարտականության խախտումը վերացնելը, յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում: Կարգապահական խախտում թույլ տված աշխատողի նկատմամբ սահմանվում է ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին գրավոր բացատրություն (զեկուցագիր և այլն) ներկայացնելու հատուկ՝ մեկօրյա (աշխատանքային) ժամկետ:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՀԱՅՈՑՅԱՆ